



ԿՐՈՎԵՆԵՐ ՊԵՏՐԵՆԵՐ ԲԵԼՅՈՒՐԵՆԵՐ ԵՒ ԾԱՌԵՆԵՐ

ԹԻՒ Բ. — ՀՐՁԱՆ Ե.

1872

ՏԵՐԵ Ե. — ՕԳՈՍՏՈՒ 21

Կ Պ Օ Ւ Ա Կ Ո Ւ

ՊՏՈՒԹՅԱՆ ՑՈՒԿԱՅԻ Բ

१०६

Ակնաբեկու ալսես և Տիգ.

21085

6. *Leucosia* (L.) *leucostoma* L. (Lepidoptera)

“Այ է հրանք-լիցն աղասա-ըեւ վ պարհութեաց պլատան, հային +ազ բանա-որ հօդին և բանակ ախաղաց վանակացն : :

Ը՞եդ ժամանակսն ընդ այնուիկ յուղեւր պիղծ աղանդն Արիոսի Եղեքսանդրացւոյ. վասն որոյ հրամանաւ բարեպաշտ ինքնակալին Հռոմոց մեծին Կոստանդիանոսի գումարեցան Յմր. հայրակետք ի Ամիկա Բիւթանացւոց առ ի հերքել զմոլար բանս ժանտին Արիոսի, յորոց մի էր և երանելի հայրապետոս սուրբըն Յակովը Մծրնայ. զոր տէսեալ մեծի ինքնակալի ի յընդարձակ ժողովարանի սրբոյ տաճարին. զի հրեշտակն սպասա-

ւորէը սըրոյն Յակովբայ ընդ որ զարհու-
բեցաւ թագաւորն երկիւղիւն ասառած-
սիրութեան, զայս ակնարկելով ասաց .
“որ ի հրանիւթիցն սպասաւորելով զար-
հուբեցոյց զթագաւորն,, , սովոր են զիքք
զանմարմին Խութիւնս՝ օդոյ հրոյ տեսու-
թեամբ նմանեցուցանել առ ի մեր իմա-
ցումն. այլ և ինքեանք հրեշտակքն յե-
րեկին՝ առնուն զկերպս լուսոյ արագա-
շարժ օդոյ և փայլական. ուր ասէ սուրբն
Հերոնիմոս. **Ճ'առ Ի.Օ.** ի վերայ Պ.ա.
հոգիս լինել առ սուրբսն, և առ արժա-
նաւորս հուր. վարելով յեռանդն. կամ
զանմարժանս պատուհասելով. և մեծն
Վարդան ասէ. մեկ Աազ. **Ճ'Գ.** Կ. թէ-
պէտ ի բնութենէ չունին կիզողութիւն.
այլ հրամանաւն Ըստուծոյ կիզուն իբրև
զԱռզոմ. և զմեզս կիզուն իբր զԼշսա-
յեայն, և մեկնիշն զըէ ի վերայ բանին,
բոց հրոյ. իբրև բոց վառեալ. իբրև կայ-
ծակն բորբոքեալ. նմանս հրոյ բորբոքե-
լոյ ազգող ներգործութեամբ. պայծառ

Ճանաչմամբ և ջերմութեամբ սիրոյ: Եւ
դարձեալ ի զիրս նմանութեանց ասի,
յերես ՅՅ: Արեշտակն նմանի հրոյ՝ քա-
ռակաբար. եթէ նկատիցի մք ի գոյացու-
թիւնն հրոյ, ի դերազանցութիւնն որք
առ տեղին. ի զօրութիւն նորին. ի փայ-
լումն նորին. զորոց գեղեցիկ խօսի տես
անդ. ըստ այսմ նմանութեան ասաց “Հը-
րանիւթ”, զհրեշտակաց, որք ըստ Պօղոսի
առաքին ի սպասաւորութիւն առ ժա-
ռանգողս փրկութեան, յոյր վերայ ասէ
մեկնիչն,” տիրապէս զինամս ընտրելովն
յայտ առնէ բանս, բայց ընդ նովաւ ամե-
նայն հաւատացելոց. վասն զի ամենեքեան
ի կոչմանէն Վստուծոյ կարգեալ են ի
փրկութիւն. և ստացեալ զիրաւունս ինչ
ժառանգութեան. թէպէտ և մարթ է ո-
մանց վրիպիլ իւրեանց յանցանօք. ըստ
այսմ ապա ուրեմն յայտ է թէ ամենայն
հաւատացելոց կարգեալ կան յատկապէս
հրեշտակք ինամակալուք առ ի օգնել և
պահպանել. և ի նեղութեան ի թիկունս
հասանել. զոր սպասաւոր անուամբ յայտ
արար ասելով “սպասաւորելով,, տես
դու զբարեգթութիւնն արարչն առ ընտ-
րեալ իւր. թէ զիարգ ինամակալու է նո-
ցա՝ ի ձեռն սպասաւորութեան հրեշտա-
կաց. առաքելով զնոսա յօդնականու-
թիւն ի պէտո և յօդուտ փրկութեան
նոցա յամենայն չարէ. եթէ գնայցին ըստ
կամացն Վստուծոյ. զի եթէ ինամակա-
լութիւն նոցա աղդաց և թագաւորու-
թեանց, և թէ բնական արարածոց, և
մեղաւորաց իսկ ի պահելն կամ ի պատու-
հասելն. յայնմ ամենայնի վասն գործա-
կից լինելոյ ի բարիս է հրաւիրելոց ի փըր-
կութիւն. ապա ո՞ր չարիք կարող են դըր-

դուեցուցանել զհաւատացեալս՝ եթէ
ըստ օրինի քրիստոնէութեան կացցեն
հանապազ, և եթէ հասանիլ հասանի.
ցեն և զայն ի բարիս շրջեն հրեշտակք,
զի ըստ այսմ և հրեշտակն սրբոյն Յա-
կովբայ սպասաւորէր նմա. վասն պատրիկ
երգեաց “սպասաւորելով,, : Վյսինքն ի
բաց մերժելով ի նմանէ զզանազան չա-
րիս հնուրեալն ի թշնամոյն. և կամ ի
բարիս շրջելով. զոր տեսեալ թագաւո-
րին՝ զարհուրի ի հրատեսիլ կերպարա-
նաց հրեշտակին. բնական իմն է մարդ-
կանց ի տեսանելն զհրեշտակս՝ զարհու-
րիլ և երկնչել. որպէս եղե զեղեօնի ի
ճանաչելն եթէ հրեշտակ Տեառն է՝ զար-
հուրելով ասաց ա ա թէր տէր զի տեսի
հրեշտակն Տեառն դէմ յանդիման. զոր
զօրացուցեալ հրեշտակի ասէ “խաղաղու-
թիւն ընդ քեզ, մի՛ երկնչեր ոչ մեռանի
ցիս. բայց ընդելացելոց ոչ այնպէս, պատ-
ճառեալ յերկիւղէ. այլ ի պատկառա-
նացն պարագրեալ երկիւղեւն Վստուծոյ.
ըստ այսմ և մարիամանք թէպէտ չ'ին
ընտելացեալ ընդ տեսութիւն հրեշտա-
կին, այլ գոլով արդարք ոչ երկիւղական
կերպիւ երեւէին. զի ասէ աւետարանիչն
և հասին առ նոսա արք երկու ի հանդերձս
լուսաւորս, և իրեւ զահի հարան և խո-
նարհեցուցին զերեսս իւրեանց յերկիր,, :
այսինքն պատկառեցան ի նոցանէ. ըստ
այսմ էր և զարհուրելի սրբոյն Առոտան-
գիւնոսի. ի տեսանել զհրեշտակն ի ըս-
պասու, ըստ որոց ասաց “զարհուրեցոյց,, :
այսինքն պատկասս եցոյց զթագաւորն. ապա
թէ ոչ զիարգ լինէր զարհուրել յերկիւղէ
պատճառեալ. որ հանապազ տեսաներ
զհրեշտակն և խօսէր ընդ նմա՝ իրեւ ընդ

սիրելոյ և բարեկամի. ըստ Եգաթանգեղոսի. և թէպէտ աստանօր երեխ զի զարհուրեցոյ զնա ոչ հրեշտակն լինել. այլ սուրբն Յակովը. այլ սակայն յայտ է և այս թէ հրեշտակիւ եղե այն. ապա առ հրեշտակն վերաբերի գործն զարհուրական եղեալ առ թագաւորն. և որպէս թէ կամի ասել, այս այն այր է հաճոյական կամայն Աստուծոյ, որում և հրեշտակն Տեառն սպասաւորէրը ըստ իւրում առաքինազարդ և սիրելի գոլոյն յաշ Աստուծոյ, զոր տեսանելով և աստուածատէր թագաւորին սրբոյն Կոստանդիանոսի պատկառեցաւ ի հրեշտակէն երկիւղիւ Տեառն և միանգամայն ի սրբութենէ առն Աստուծոյ սրբոյն Յակովը և երանաշորհ հայրապետին Ածքնայ, ուստի գեղեցիկ ներբողէ ապա զնա ասելով, “Հովիւ քաջ բանաւոր հօտի,, . Հովիւ քաջ զանձն իւր Տէրն մեր անուանեաց. զինամակալութիւնն, որ առ մեզ, հովուական անուամբն նշանակեալ. և զինի եկեալ խնամածու հովիւսն ևս հովիւ քաջ յորթորթեաց յասելն “Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց,,,: Բատ սմին և սուրբ հայրն մեր Ներսէս Կայիցին տեսանելով զարիական հովուութիւն նորա’,, Հովիւ քաջ,, կոչեաց զնա. ապա արդարե այնչափ էր խնամակալութիւն քաջ հովուիս հակողի առ բանաւոր հօտս իւր, որ յամենուստէք պահեալ պաշտպանէր ի գայլասարաս արանց արեանց, և ի գիշատող խարուսիկ անձանց ի նեղեալ և ի վշտապատ ժամանակին, յորում յամենայն կողմանց փչէր հողմն դառնարեր և ալեկոծիչ հաւատոյ. է զի՝ ի հրապաշտ Պարսից, որպէս մանաճրհին ապստամբու-

թիւն. և է զի՝ ի հերեսիովտաց, որպէս Վրիոսին չարափառութիւն. և է զի՝ ի գայլակղեցուցչաց, որպէս զջմարտութիւն սուրբ գրոց ի գերեւ և իրը լեալ բարբանջողաց. և այս ամենայն վշտակրութիւնք առհասարակ զիմեալք գային ի վերայ հօտին իւրոյ, իսկ նա ըստ իւրում խոհական և աստուածատէր մտաց տարածէր զթես իւր և ընկալնոյր ընդ անթովք պահպանեալ յամենուստէք հասեալ վրտանգաց, և ոչ տայր ի բերան գայլոյ և ոչ մի. ընդ որ ապշեալ յիմարեալ մնայր սատանայ հանդերձ խորհրդակցովք իւրովք և ընդ խոհական կառավարութիւն երանելոյն. և աչալուրջ արթնութեամբ պահպանութիւն քաջ հովուին: ուստի իրաւամբ արժանացաւ յայսմ գերազանց կոչմանս, “քաջ հովիւ բանաւոր հօտին,,,: Եւ ըստ իւրում հայրական և անչափ գթոյն, որ ի վերայ ժողովրդեանն Աստուծոյ. կրկին երախտաւոր էր առ ամենեւեան, ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ բժշկութեան. զի այս է արդարե գերազանձ վայելչութիւն գթոյն հայրականի. զի ոչ ըստ հոգւոյն և եթ, այլ և զմարմնոյ խընամս տարցէ ըստ առակաւոր բանին Առզօմնինի թէ. “կշիռ արդար ընդունելի է նմա,,,: Եւ ըստ առաքելական տնսեսութեանն որ առ Տիմոթէոս սիրելի աշակերտն իւր՝ յասելն “այսուհետե մի և եթ ջուր ըմպիցես, այլ սակաւիկ և զինի խառնեսջիր վասն ստամոքսի և ստէպհիւանդութեանց,,,: Տեսէր զգութն հայրական. նկատեցեր զհաւասարակշունդիւնն առաքելական, նշմարեցէր զհաւասարապատիւն հոգւոյ և մարմնոյ. որ ի խնամոց քաջ հովուին արտափայլեալ առ հպա

տակեալս. ըստ այսմ ապա և սորա լինելն այսպիսի ոք ծանուցանէ յասելն, և բը-
ժիշկ ախտացելոց անձանց,,. ամենեւեն
ըստ իւրում երկնաւոր վարդապետին նը-
մանեալ, որ նախ զգրաւ հաւատոյն ըն-
կալողը. և ապա պարզեւէր զբժշկութիւն
մարմնոյ ախտացեալ անձանց. որպէս և
զրէ երանաշնորհն Գրիգոր ջահն Կարե-
կայ յասելն. «ոչ պարզեւաց աշաց նոցա-
լոյս, եթէ ոչ նախ զհաւատոցն զրաւ ըն-
կալաւ,, , ըստնմին և սա նախ՝ զհոգուցն
բուժէր զախտօ. և ապա՝ զմարմնականն
խնդրէր յԱստուծոյ. և տայր բժշկու-
թիւն՝ շարժեալ ի զութ հայրական առ-
ամենեւեան. զի եթէ զանդամալոյծն աշ-
ուեմ, զոր ի դաւիթ եկեղեցւոյ յարուցին
յոսս ընդ սրբոյն Մարուգէի՝ անուամբ
Տեառն զօրութեանց. և եթէ զեարուսիկ
զարսն որ մինն մեռեալ զինքն ձեւացուցա-
նէր սրբոյն. և միւսն խնդրէր զո-
զրմութիւն ի նմանէ որպէս մուրացիկ,
ծածկեալ զնարեւութիւն իւրեանց պա-
տռուական ճշմարտութեան. զորոց իմա-
ցեալ զնարեական ստապատիր բանս՝ ե-
րանելն, «ըստ զործոց ձեռաց ձերոց ե-
զեցի ձեզ,, ասելով՝ զձեացեալն ճշմար-
տիր, և գարձեալ խնդրանօք ընկերին
դառնալով յուղղութիւն՝ վերստինի կեն-
դանութիւն՝ գարձուցանէր զմեռեալն.
ըստ այսմ և ամենեցուն պարզեւէր զհայ-
ցութծնն, և հանապազ պարզեւէր յիւր
բարեխօսութիւնն ապաստան եղելոց. և
զանուն նորին արդեամբ բարեգործու-
թեան ինկեալ փառաւորողաց ի փառս
և ի պատիւ արարչին ամենայնի յանկէտ
յաւիտեանս փառքը և լուսը մայուս

ՅՈՒՂԻՄՆ-ՀԱ:

Եւ արդ՝ եթէ ունիմք այսպէս միջնորդ
և բարեխօս. և միանդամայն վանիչ հի-
ւանդութեանց՝ ըստ հոգւոյ և ըստ մար-
մնոյ, է զի՞ բարեխօսութեամբ, և է զի՞
ոքանչելի զօրութեամբ, առ ո՞ ապա զի-
մել պարտ է մեզ յարար կամաց մերոց,
եթէ ի հաճոյս սրբոցն Աստուծոյ, զի եթէ
ըստ կամս մարմնոց մերոց գնայցեմք՝ մե-
ռանելոց եմք, և եթէ զհաճոյս սրբոցն
առնիցեմք՝ կեամբ. զի եթէ նովաւ կեամք
նովաւ շարժիմք, նովաւ եմք, և նա զայ-
սոսիկ սիրելեաց իւրոց ի ձեռն՝ պարզեւ-
մեզ. զի՞ ապա յամառեալ մնամք յան-
գոսնելի կիրս, ի բարկութիւնս առ ըն-
կերսն հաւատոյ՝ զոր արգել Տէրն՝ ասե-
լով,, , որ բարկանայ եղրօր իւրում տա-
րա զարտուց, պարտաւորութեանն սաս-
տիկ վճիռ ի զեհէն հրոյն եհատ ի վերայ-
ի նախանձ վասն ունելոյ ընկերին զքա-
րութիւն, զոր արգել Աստուծոն ի ձեռն
օրինաց իւրոց՝ յասելն, «մի՛ ցանկար ա-
մենայն իրաց ընկերին. որոյ մայրն է նա-
խանձն. յագահութիւնս մարդկային ի-
րաց, զոր և զնա Տէրն արգել յաւետարա-
նին. և զիարդ մի միթուիցեմ. որոյ չարու-
թեան մասունքն անթիւս է տարածեալ և
զիարդ ապառ շարժիմք ի հեղութիւն. ի-
րարեհաճութիւնն. յողորմութիւնն, և ի գր-
թութիւն լելով զայսոսիկ ինձ թուի,
զի որպէս պատիմքն աիրատուր առ ամե-
նեսեան սիրեցաւ, նոյնպէս և զօրութիւն
Բանին Աստուծոյ որ առ ևսոյ՝ թէ ևմի
մնացէ հոգի իմ ի մարդիկսդ մարմնն ե-
ղելոց,, , նոյնն յանհաւանսն տարածեցաւ.
զի եթէ չիք հոգի, ուր արգեօք զացուք

զկենդանութիւն, և թէ չեք հաւանութիւն, ուր ապա զպատուիրանապահութիւն՝ և ուր չեք պատուիրանապահութիւն զիանը հաշտութիւն ընդ աստոծոց և ընդ սրբոցն այցելութիւն. և ուր արդեօք զկեանը՝ եթէ ոչ յԱստուած. ըստ այնմ. «Ես եմ յարութիւն և կեանք,:: Եւ ուր զԱստուած՝ եթէ ոչ ի պատուիրանապահութեան. և ուր ըզ պատուիրանապահութիւն, եթէ ոչ ի հաւանութեան կամաց. և ուր այսոքի անդ ոչ երբէք պատուհաս. որպէս Մոդսէս նախանձախնդիր օրինացն, զպահեցողն օրինաց օրհնէր, պարգևեալ յոյն զպալիք զկենացն երկարութիւն. զանգոց և զերեց առաւելութիւն, և այլ ամենայն բարիք՝ առհաւատչեայն երկնից՝ ընծայէր նոցաւ. Խսկ ոչ պահողացն զի՞նչ. քստմնելի վճիռ արդարեւ, սուր՝ մահ զերութիւն՝ սով՝ կարծութիւն կենաց, կտառորութն որդւոց առաջի իւրեանց. այլ և ամենայն պատիժք առաքեալք առ նոսա: Տեսե՞ր զպահպանութեան օրինացն ըզ պատուղս. նկատե՞ցիք զոչ պահելոյն պահելոյն պատուհաս. ապա դարձուցեալ զկամն մեր՝ Հաւանեսցոնք պատուիրանին. և գտցուք զհողին շնորհաց՝ զմայրն ամենայն առաքինութեան. և զեւրաքանչեւք պարզեալն յԱստուծոյ զզդայտկան զօրութիւնն՝ ի բարեգործութիւնն, զերեակայութիւնն՝ յըմբոնութն երախտեացն բարերարին. զմիշողութիւնն՝ ի միտ ածել զտնօրինական գործս Քրիստոսի. ըզմիտս՝ առ ի քննել զպատուիրանս նորա. զաչո՛ ի գլութիւն ընկերին. զեերանս ի միսիթարական բանս սգաւորաց. զւելիս՝ ի յուր բանիցն Քրիստոսի. զձեռս՝ յո-